

1890

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴՐՈՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻՇ ՓԵՏՐՈՒԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԱՆՑԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԿՐԹԻՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՆՈՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԱՆՀՐԱՎԵՏՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ



Ի՞նչ, մինչև յայսօր բազմիցս ողբացեր են ուսու-  
մնասէրք ազգիս, թէ մենք չլենինք այն հարուստ  
գրչագրերն, որով ճոխացած են եւրոպական ազ-  
գոց մատենադարաններն. իսկ եղածներն՝ մի  
քանի վանական հիմնարկութեանց մէջ ամփո-  
փուած են, որով ամենու՛ն անմատչելի կը մնան  
և մենք զրկուած ենք նոցա ուսումնասիրութե-  
նէն. մտնաւանդ թէ դատապարտուած ենք մի քո՛նի տպագիր օրի-  
նակաց վրայ ընել մեր զիտողութիւններն, որով մեր քննական ու-  
սումնասիրութեան գործը յառաջ տանել ուզած ժամանակ կը տես-  
նենք, որ մազպանիկ աշակերտաց նման ետի գնացել ենք: Այսպէս  
ուրեմն ձանձրացած և ճարահատեալ՝ սկսան նորանոր շաւիղներ ու-  
րոնել՝ մեր ազգն և նորա անցեալն ուսումնասիրելու համար: Ուստի  
ոմանց կարծեօք, իբր թէ պէտք է թողուլ հեղինակութեան ոճն և  
քննադատականն ամենուրեք՝ մար արկանել: Ումանք ըսին, թէ ազ-

գային հնաւանդ երգերով, ժողովրդեան մէջ դեռ չընդ վէպերով և գրողներով պէտք է այսուհետև ուսումնասիրել մեր անդադրող, հուսկ, ըստ այլոց՝ լեզուաբանական կամ բանասիրական (philologique) շաւղով հարկ է ուսումնասիրել զայն, Յիբրաի, սորս առհասարակ գեղեցիկ մտածութիւններ են, և կարող իսկ են յարմար ժամանակագ և պարագաից մէջ մեծ յոյս ծագել մեր պատմական անցելոյն վերայ, եթէ իրենցմէ աւելի յուսաւոր միջոցներու և ծանօթագոյն և հաստատուն շաւղաց միայն հաստատուած լինին։ Ոսկայն մեր 'ի վերանցը նկարագրած գրութեան մէջ, մեծ առաւելութիւն միշտունին և չպիտի կարենան յուսադած արդիւնքներն յառաջ բերել։ Ո՛վ աւելի հանճարեղ, քննասէր և վաստակաւոր քան զսիրելի և հայրենասէր Աւագանուն ազգիս, որ վնեւտեան գեղադիտակ ծովածին մէջ բնակելով՝ եօթնասուն ամաց ծանրութեան հետ 'ի միասին՝ Հաստան աշխարհն ևս կը կրէ իւր պարթևական ուսող վրայ, նման Ուրասի, և նոր աշխարհագրութեան և պատմութեան հետ՝ հինն ևս կը նորակերտէ 'ի զարմանա ամենեղուն։ սակայն և այնպէս նա ստիպուած է ձեռքէ չթողուլ մեր հին հեղինակութիւններն Որդարև, ինչպէս յոնցըններն այդ հինաւուրդ հեղինակութիւններն, երբ չունինք և չեն խօսիր մեզի մեր խոր հնութեանց թանգարանները, ինչպէս գոցներ մեր գրաւոր մատենաններն, երբ դեռ ունինք առձեռն պատրաստ մեր հեռաւոր անցելոյն արձանագրութեանց հաւաքմունքներ։ ինչպէս վատահինք մեր բանասիրութեան վերայ, քանի որ նա ինքն իսկ լի է տարակոյսներով և հաստատութեան դեռ կը կարօտի մեծագէտ։

Որդ, ըստ իմ կարծեացս, իբրև մի հաստահիմն ճշմարտութիւն ընդունելու ենք հետեւեալ սկզբունքը, որուն յայտնի ապացոյց են և մինչև ցայսօր կատարուած և ապարդիւն մնացած յուսահատ փորձերն իսկ. այսինքն, թէ մեզ նման ազգի մի անցեալն իւր իսկութեամբ ճանաչելու համար բաւական չէ այքի առջև ունենալ նորա լեզուն և դրական պատմութիւնը միայն, նոյն իսկ եթէ բոլոր իւր ամբողջութեամբ մեր ձեռքը հասած լինէր այն։ ինչպէս բաւական չէ մարդկային մարմնէն կամ հոգիէն առանձինն ճանաչել մարդկային անհատի մի բնութիւն և առանձնայատկութիւններն։ Արքան ուրեմն անկատար պէտք է համարել մեր անցելոյն վրայ ունեցած ծանօթութիւնքն, եթէ մտածենք, որ մեզ հասած գրաւոր յիշատակարանք և լեզուական հարստութիւնք՝ մեր անցելոյն մի մասն ևեթ է, կամ լրաւ ևս նորա առհինացած նշխարքն։ և թէ նորա միայն՝ մեր անցելոյն հաւատարիմ ներկայացուցիչ լինելէ շատ հեռի են։ Եւ ստուգիւ, նոյն իսկ մեր գրութեան ազգաց անցեալի պատմութեան վրայ այս վերջին ժամանակներս գործուած ամենամեծ յեղափոխութիւնքն իսկ՝ ակնբեր կը հաստատեն իմ ասածս։ ինչպէս յայտնի է արդէն 'ի վաղուց Հերո-

դոտոսի, Բերոսոսի, Մոնիմոնի, Դիոդ. Ուիկիրիադուդ և այլոց գրաւոր երկասիրութեանց ձեռքով ծանօթ էին ուսումնաստենչ աշխատհիմն իր գիտատաղուդ, Ասորեստանեայց, Մարաց և Պարսից պատմութիւնը Սակայն մի քանի տասնեակ տարիներու մէջ հնադիրութեան ձեռքով և անհոնմ հետազոտութեամբը երկրիս տակէն դուրս բերուած թերէի, չիւնուէի և Պերսեպոլիս պէս հինաւորց քաղաքաց աւերակներն և յիշատակարանքը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն եղիպտական նշանագրոց և սեպածե արձանագրոց ընթերցումն դիւտն՝ ցուցին մեզ անպատրուակ, թէ ստուգիւ իբրան անճիշդ և թերի էին վերոյիշեալ գրաւոր հեղինակութեանց մեզ տուած տեղեկութիւնը, և որպիսի տարբեր են եղել արն ազգաց քաղաքային և կրօնական անցելոյն վրայ կադմած մեր ծանօթութիւններն։ Այն ժամանակ ուր ուրեմն աչ բերնին լայն բաղին և տեսան տմենայն դիւրահաւանք և անհաւանք ՚ի միւսսին, թէ որպիսի գաղտնի եղելութիւնք և խորհրդական պատճառներ տեղի ունեցած են յերբեմն ժամանակի, որոնք ամենեկն ՚ի զիր անցած չեն, և թէ ՚ի գիր անցածներէն իսկ չատերը՝ որպէս կերպարանաբոյն եղած են։ Իզիպտացուց քուրմերուն յատուկ վարդապետութիւնը, զոր Հերոդոտոս անգամ չկարաց նոցա բերնէն առնուլ և գաղտնիք ինչ կը համարի, այսօր եւրոպական լիկէններու մէջ մեկուն բանիւ կը վարդապետուի։ Այսպէս պարզուած են նաեւ Մերիս թագաւորին և Մերոէ լին, յորիւրինմոսի և այլ բազմութիւ և ալ ընդ այլոց աւանդութեանց իսկական եղելութիւնը։ Ուր թողից յիշել իզիպտացուց և Ասորեստանեայց թագաւորական Հարաւորսեանց և անծանօթ թագաւորաց յայտնութիւնը, որք առաւպետական քոզի տակ ծաշկուած կը մնային։ Սակայն ամենուն ուկնկալութեանց դուրս և զամէնոր գարմանցնոց եղան Ռոմանէս առաջնոյն և իւր որդւոյն Ռոմանէս Բ՝ մոմիաներու յայտնութիւնը, զեւ երկու տարի առաջ։

Ուրեմն, այժմ կը հարցնեմ. արն բանը որ հանգիպեցաւ վերոյիշեալ ազգաց անցելոյ մասին, նոյնը կարող չէ արդեօք հանգիպած համարել նաեւ մեր գրաւոր կերպով աւանդեալ պատմութեան մէջ, նկատմամբ անցելոյն։ Միթէ մեր պատմիչներն աւելի հմուտ, գիտնագոյն և ուղղագատ քննութեամբը գրեցին իրենց երկասիրութիւնը քան զհայրն հին պատմաբանից Հերոդոտոս։ Կարծեմթէ ոչ. որովհետեւ գրեթէ նոքա զուրի էին բոլոր արն միջոցներէն, որով ճոխացեալ էին Հերոդոտոս և միւս պատմագիրներն։ Գարձեալ զիտիւ ենք, որ մեր պատմագրաց ուշադրութիւնէն վրիպած է հեթանոս Հայաստանի անցեալն, իւր առոյց եղելութեամբը և ժողովրդական կէս ՚ի կէս վէպերով և զրուցատրութեամբը միայն կը ներկայանայր նոյն։ մանաւանդ թէ մեր պատմագիրը՝ բոլոր իւրեանց ուշադրութեան իբրեւ միակ առարկայ ունենով զբրիստոնեայ Հայաստանը, գուցէ թէ կամաւոր ջանք մի ևս ունեցած են մոռացութեան

դատապարտելու այն ամէն բանը, որ հեթանոսութիւն իր շնչերս  
Դարձնալ, ենթադրելով իսկ, թէ ամենայն հաւատարմութեամբ գը-  
րած լինին իրենց տեսածն Դ. և էր դարերում, սակայն այդ սակաւ  
մնացորդը՝ չէին կարող մեր անցելոյն կատարելալ և որոշ պատկերը  
ներկայացնել մեզ, ինչպէս նեխեալ և կիսեղծ զիտիէ մի հանուած  
լուստտիպ պատկերը՝ չկարէ ներկայացնել զայն կենդանացող հո-  
գւոյն և բոլոր նորա մտաւորական և բնական եղելով իւնչն:

Ուստի, իրն ըստ ինքեան այսպէս լինելով, այժմ բնականապէս իր  
հարցոյն. Ոչա ուրեմն ի՞նչ բաներ հարկաւոր են մեզ, մեր անցեալը  
լաւ ճանաչելու և ներկայ սերունդը կրթելու համար, եր ապագայա-  
նեմ բոլոր համոզմամբ, թէ մեզ անհրաժեշտ հարկաւոր են այն շօշա-  
փելի և անգիր, յիշատակարանը, զորս մեր տարաբազդ իկ նախնիքը՝  
կամ գրացի ազգաց իրենց երկրին վրայ արչաւած և տիրապետած  
ժամանակ, և կամ իրենք ընդ հա՛տուալին նոցանէ միոյն կամ միւ-  
սոյն քով ապաւինած ժամանակ՝ աւանդեցին ՚ի ծոց երկրի կամ բնու-  
թեան անձեռագործ ապարանից մէջ, և կամ յորմն շինուածոց, ըստ  
վկայութեան հին պատմագրաց: Մեզ հարկաւոր են հայ հանճարոյ և  
սրտի, այսինքն է, ղեղարուեստից ձեւերով արտադրուած հասարա-  
կաց և տնային քանդակներն, գործիներն և կահկարասիքը. մեզի  
հարկաւոր են մեր իշխանաց աշխարհայինութեան լաւ կամ վատ ար-  
տադրութիւններն, այսինքն է, այն բազմաբնակ քաղաքաց, աւանաց,  
բերդից, տաճարաց և գերեզմանաց և այլն մնացորդը, զորս յայն-  
ժամու հայաստանը իւր կամ օտարի գործակցութեամբ յօրինեց  
կազմեց, և որը նոյնպէս իր կամ օտարի հարուածոց ներքե վերա-  
ծուեցան ՚ի կոյտս տխրատեսիլ աւերակաց: Մեզի հարկաւոր են այն  
արքունական և նախարարական դիւաններն, յորս կարող էին պա-  
հել և պահեցին իրենց քաղաքային գործող և դեսպանական յարա-  
բերութեանց գրաւոր յիշատակարաններն, իրենց յազմութեանց  
պատմութիւնն, իրենց հպատակ գլուղից, տոհմից և տանց հայուե-  
րներն. մեզ հարկաւոր են այն խեցեղէն կամ մետաղեայ դահեկան-  
ներն՝ որոնց միայ պէտք էին դրոյմել իրենց նշանագրոյմն և տա-  
րազը. այն անդրիք՝ որով կը ներկայանային դիւցազունը միւր, զիր  
և դիգանողը՝ ժողովրդեան հետ ունեցած յարաբերութեամբ և  
հանդերձիւք: Միով բանիւ, մեզ հարկաւոր են այն ամենը՝ զորս գոր-  
ծեց և կրեց հին Հայաստանն՝ այլ և այլ պարաշրջաններու մէջ իւր  
քաղաքային, մտաւորական և կրօնական կարողութեանց համեմատ,  
և որը միայն կարող են լինել փոքր ՚ի շատ ներկայացուցիչ մեր ան-  
ցելոյն:

Արդ, պէտք է համոզուիլ, թէ քանի որ մենք այս բաներս ղեռ  
լաւ հետազօտած չենք, քանի որ յիշեալ իրողութեանց դէմ մասն  
մի յաջողած չենք ՚ի լոյս ածել, դեռ մեր ցանկացած նպատակին

հասած չենք, և ընդունայն են մեր ջանքերն. որովհետև վերոյիշեալ իրերէն ոչ մին ճանչցած չենք լինիր: Յիրաւի, աւելորդ է անբանաւոր է ընդունել կամ մերժել այն բանը, որ անստոյգ է. աւելորդ է երկրիս վրայ սրննել այն դատանի պատճառներն, որոնք երկրիս տակ դեռ ծածկուած են և բարեբար ձեռաց կը սպասեն՝ կանգնելու և խօսելու: Բաւական չէ միայն լսել մեր հին մատենագրաց քով և կամ բանասիրել հայկական բարբառայն մէջ բոլոր վերոյիշեալ ընտանեկան և հասարակային, քաղաքական և կրօնական, երաժշտական, և այլն, գործեաց լոկ անուններն, քանի որ նոցա ներքին կազմութիւնքն և արտաքին ձևերն մեզի անծանօթ կը մնան. վասն զի մի և նոյն անուանց, սեռի և տեսակի պատկանող արուեստական արտագրութիւնք՝ կարող են իրարմէ լաւ կամ վատ լինել, և այս զանազանութիւնն է որ տիրապէս կը ցուցնէ որ և է ազգի մի մոռուորական, կրօնական, և այլն, վիճակը: Եղան արդարն ինճիճեանի պէս բազմաճմուռ և մեծարգիւն անձինք, որք փորձեցին խօսել և գրել յիշեալ իրողութեանց մասին. բայց ոչ որ կարաց դեռ, ըստ իսկութեան, ներկայացնել մեզ մեր հնութեանց մասնագիտութիւնը: Քանի որ մեր անցեւորի ուսումնասիրութեան համար մի ուրիշ ոճի և միջոցներու դեռ չենք դիմել, վախնաք թէ ինչ ինչ շինել ուզած ժամանակ՝ կարող ենք յանգէտս կործանել զայն. քանի որ մեր անցեալը՝ վերոյիշեալ շօշափելի յիշատակարաններով ներկայացուցած չենք ուսումնասիր եւրոպային, զուր կը յուսամք հրաւիրել նոցա համակրութիւնը մեր ազգին և աշխարհի վերայ: Ի զուր կը կոչենք, ինչ պատճառաւ արդեօք Բագրատունեացմէ մեզի դահեկան հասած չէ բնաւ. ինչ պատճառաւ Արշակունի թագաւորաց մասին շատ և շատ կէտերու մէջ տոհմային պատմագրութիւնը արտաքնոյն կը հակասէ. ինչ պատճառաւ Քրիստոսէ 2,000 տարի առաջ գոյութիւն ունեցող ազգ մի՛ չորս Հարստութիւն միայն կը հաշուէ. ինչ պատճառաւ Հայք Գրիստոսէ վեց դար առաջ՝ ի փռւագիտ յարեմտեան Հայաստանը գաղթած կը կարծուին. և այսպիսի հազար և մի ուրիշ հարցեր և տարակոյսներ՝ զորս ստիպուած եմք միշտ յարուցանել, բայց ոչ երբեք զոհացուցիչ կերպով լուծել: Եւրոպայ երկմն երկմն այսպիսի դաղանի եղելութեանց լուծումն ստանալ, պէտք է հեղինակութեան վրայ հաստատուած ոճին հետ՝ զուգել նոյնպէս քննականը. եթէ կ'ուզենք մեր անցեալ պատմութեան հետ ի միասին ապահովել և բարգաւաճել նաև մեր ներկայ գրականութիւնը, պէտք է անսականէն իջնել գործնականին. այս ինքն է, առանց գոցելոյ մեր սիրելի նախնեաց պատմագրութիւնը, բանալ նոցա անյայտացած միացորդը. ունելով ի ձեռին քննադատութեան չափող և ճշող կարկինը՝ գծել մեր աշխարհի նուիրական վայրաց հինօրեայ սահմանները. մէկ կողմէն կարգաւ մեր խորեանցի Հերոդոտոսի ճշգրիտ նկա-

րազիրը՝ Արմաւրի, Արտաշատու, Նախճաւանայ եւ այլոց շահատա-  
նաց մասին, իսկ միւս կողմէն պեղիւ եւ հանել նոցա ցանկալի մնա-  
ցորդքը. աստի ողբալ ընդ Երասխայ եւ Սխուրենոյ մեր կործանուած  
եւ կորուսեալ արուեստին եւ գիտութեանց հրաշակերտքն, եւ անտի՝  
որոնք եւ հաւաքել զանոնք ՚ի մի:

Արդեօք այս իմ արտայայտած անհրաժեշտ իզձերս եւ մտածու-  
թիւնքս՝ ապառաժ անձաներու մէջ հնչող խուլ եւ անազուտ արձա-  
զանքներ պիտի մնան, թէ ընդ հակառակն, արգասաբեր եւ մշա-  
կուած հոգերու մէջ սփռուած արդիւնաբեր սերմունք, զոյս չգի-  
տեմ. բայց կ'իմանամ փոքր ՚ի շատէ այն մեծամեծ դժուարութիւն-  
ներն, որք անանցանելի լեռնաշղթայից նման մեզ ընդ առաջ կ'ել-  
լեն՝ մեր ներկայ կացութեան մէջ. ե՛կզամ դժնեայ բաղդին կապա-  
րեայ ձեռքը, որ փոխանակ բանալու՝ առաւել եւս ամրապինդ կը  
կնքէ մեր աւերեալ քաղաքաց եւ աւանաց զետնադաժքաններն. եւ  
մեր դժբաղդ ոստաններն, որք յերբեմն ժամանակի ունեցան բիւրա-  
ւոր կործանիչներ, այժմ չունին մը միայն կանգնիչ. եղան բազմա-  
թիւ հրոսակներ եւ բնութեան պատահարք, որք իրարու յաշորդելով  
կողապտեցին զանոնք եւ թաղեցին յալս երկրի, իսկ մինչև ցայսօր  
չեղաւ Շրէլյման ոմն, որ դուրս բերէր մեզ՝ գէթ նոցա զիականացած  
կամախքը. եղան արդարեւ ոմանք յազգայնոց եւ են տակաւին, որք  
կը զեգբերին մեր հայրենի աշխարհի հեռագոյն եւ խորին վայրերը՝  
մեր ժողովրդոց արդի կեանքն եւ կենցաղն ուսումնասիրելու նպա-  
տակաւ, որ յոյժ դովելի է եւ հարկաւոր. բայց անցելոյն հնութեանց  
պարագայոք՝ խիստ ցանցառ են, որ յայտնի նշան է, թէ մեր մէջ ա-  
մենուն համար դեռ զգալի պահանջ եղած չէ. Գրէթէ ութ տարի ա-  
ռաջ երբ կովկասեան հնութեանց հնագիտական ժող. վրը կնքեց իւր  
վերջին նիստը, որոշուեցաւ հետազոտել Լօռի գաւառէն մինչև ցե-  
րեան եւ անդր եղած այրերն. յետ որոյ անցին եօթնեակ տարիներ,  
եւ տեղի ունեցան վերիննայի եւ Ստսկոլմի մէջ արեւելագիտաց կրկին  
ժողովներն. սակայն Հայոց կողմանէ յԱյրարատ եւ այլուր գտնուած  
բաց ՚ի մի քանի սեպանէ զրու թեանց՝ ուրիշ բան չներկայացաւ յայնա-  
մայ՝ ըստ ինքեան մի բաւական ախուր երևոյթ է եւ ապացոյց, թէ  
այն ժամանակէն մինչև ցայսօր ոչ տէրութեանց եւ ոչ մեր կողմանէ  
ծանուցուած հետազոտութիւններն եւ պեղմունքը դեռ ըստ պատշաճի  
կատարուած չեն:

Սակայն այս բանս՝ մեր ազգին եւ ուսումնասիրաց եռանդն աւելի  
պէտք է որ վառէ բորբոքէ, քան թէ Լքուցանէ, որովհետեւ մեր ընդ-  
հանուր բարին եւ պիտոյքը՝ մենք աւելի պարտիմք զգալ եւ հայթհայ-  
թել. Արդարեւ ուրիշ ազգաց պէս չունինք ձեռնհաս իշխանութիւն եւ  
գորութիւն, բայց ունինք ըստ բաւականի կրթեալ եւ վաստակաւոր  
հասարակութիւն. չունինք տէրութեանական հարուստ գանձեր, բայց

ունինք հարուստ վաճառականներ, որոնք ինչպէս ուրիշ ազգագուստ նպատակներու, այսպէս ևս հնազիտական հետազոտութեանց համար կարող էին ճոխ դրամազույթներ կտակել, եթէ յառաջագոյն ազգային մամլոյն վարիչ անձանց և ուսումնականաց ձեռքով մի անձնաժողով կազմակերպուած ունենայինք, որուն կարող լինէին գործակցել նաև Եւրոպացիք: Այսպիսի միջոցներով՝ կարելի էր հրաւիրել նոյն իսկ Շըլէյմանի նման երևելի հնազիտաց ուշադրութիւնը, գէթ մեր ամենէն հնազոյն և նուիրական քաղաքաց միոյն վրայ, որք դեռ է դարուն իսկ կանգուն կային և բարգաւաճ, և որք զոյգ ընդ հեթանոսական հնութեանց՝ քրիստոնէականն ևս կը պարունակէին, և զոյգ ընդ հայկականին՝ օտար ազգացն ևս:

Ժամանակաւ՝ Ռուսահայ թերթերու մէջ եղան առաջարկութիւնք, ազգային հնութեանց թանգարան մի հաստատել կամ՝ էլ միաժնայ և կամ՝ Տփղիսի մէջ, ուր կարենան ամփոփուիլ և պահուիլ Կոնոսի զիշատիլ ժանեաց զոհ լինելիք հայկական այն հնութիւնքն՝ որք ըստ բերման բաղդին, կը գտնուին աստ և անդ, և շատ անգամ վերստին անգութ հարուածոց կ'ենթարկուին չար քան զառաջինն: Այսպիսի հաստատութեան մի իրագործութիւնը՝ կրկին կէտերով յոյժ օգտաբեր պիտի լինի. նախ և առաջ այս առթիւ ոչ միայն շատերն իրենց գտած առարկաները կարող են ձրիաբար անոր ընծայել, որով թէ՛ կործանմանէ կը պահուին և թէ՛ այլ ևս յօտար աշխարհս չեն տեղափոխուի: Բ. Մեր ուսումնասէրներն զիւրաւ պիտի կարենան զանոնք՝ ի մօտոյ ուսումնասիրել և անշուշտ մեծ փափաքով և զոհօղութեամբ նոցա պակասն ևս յայտնելու հետամուտ լինել: Սակայն ցաւալին այն է, որ ինչպէս արեւելեան միւս ազգաց, այսպէս և մեր մէջ սովորական առաքինութիւն դարձած է, չասեմ՝ ակտ, միշտ նուրանոր առաջարկութիւններ և ծրագիրներ ընծայել, քան թէ ընծաշուածներն իրագործել և զարգացնել: Յերաւի, մեղի պէս փոքրիկ և անօգնական մի ազգի համար չկամիմ՝ ես այս բանս մի ծանր յանցանք համարել. սակայն կարող եմ՝ ասել, թէ մեր հայրենի աշխարհին և հնութեանց մէջ ապրող և մեծ շահ ունեցող հասարակութիւնն ևս եթէ տակաւին դժուարի ձեռք կարկառել այսպիսի մի անհրաժեշտ կարևոր գործի, մեծ խտրոյաւ բացական և իւր յատուկ շահերով զբաղող Եւրոպայէն զլիսովին անսպասելի պիտի մնայ այն: Ես չեմ՝ կարծեր, թէ գտնուին այժմ՝ հայ հասարակութեան, գէթ ազգասէր դասուն մէջ, անձինք՝ որ հայրենեաց հնութիւններէն աւելի նախադաս համարին զՌամոնայն և զգիւրութիւն: սակայն կան ըսողք, թէ՛ ի զուր է սպասել մեր զօրութիւններն այնպիսի մի գործի իրագործման, որուն յաջողութիւնն անստոյգ է և արդիւնքը ոչ ինչ: որովհետև հինն Հայաստան ոչ կարող եղած է այնպիսի կարծեցեալ հրաշակերտս արտադրել յերբեմն ժամանակի, և ոչ իսկ այժմ՝ ըն-

ծայել մեզ զայնս . և այս բանս իրօք յայտնի կը տեսնուի թէ Մ. Խո-  
րենացոյ պատմութեան այլևայլ տեղերէն , բայց 'ի մասնաւորի  
վաղարշակայ առ Արշակ գրած թղթէն , և թէ վերջին տարիներս  
Խուս հնագէտ Սւլայրովի 'ի բլուրն Արմաւրայ ըրած հետազոտութե-  
նէն , ուր հազիւ թէ մի քանի աննշան և նախապատմական ժամա-  
նակի հնութիւններ գտնուեցան , առանց պսակելու նորա աշխատու-  
թիւնը :

Սակայն գիտելու է , որ այսպիսի մի առարկութիւն՝ ոչ միայն մեր  
գրաւոր պատմութեան ձեռքով , այլ նոյն իսկ ժամանակ ժամանակ  
գիպուածով յայտնուած այն մեծայարգ հնութեամբ իսկ , որք շա-  
տերուն յայտնի են և ցանկացողք կարող են իմանալ մասամբ Հ. Ղ. Ալի-  
շանի գործերէն , և մասամբ այլ նորա հորագաւտ հանճարեղ հնագէտ  
Պ. Սերովբէէն լուծուած համարելի է : Սակայն ես կարող եմ ապացու-  
ցանել , և իմ ուրիշ գրութեանց մէջ տարիներով առաջ ապացուցել  
եմ , թէ մեր հ յրենի աշխարհի աշխարհադրական և կեդրոնական  
գիրքն աստի , և անտի արտաքին պատմագրաց ակն յայտնի վկայու-  
թիւնքն և այն աշխարհակալ ազգաց և բիրաւոր գաղթականութեանց  
պատմութիւնն , որոնք ամէն ժամանակաց մէջ անդ խնդրեցին իրենց  
բաղլն և հարստութիւնը , անդ հաստատեցին իրենց գահայքն , անդ գոր-  
ծեցին բարբարոսութիւններն և յագեցուցին իրենց ընշաքաղց աւար-  
առութիւններն , ամենիքին առ հասարակ կը վկայեն , թէ այդ աշ-  
խարհն և ազգաբնակութիւնը կարծուածին չափ ոչ բարբարոս եղած  
է և ոչ աղքատ , այլ բազմութեան քաղաքօք և ուշխարհաշինութեամբք :

Գալով Մովսիսէն մէջ բերուած փաստին՝ գիտելու է , որ նա Ար-  
տաւազկայ համար ևս նշնպիսի տարօրինակ վկայութիւն մի կուտայ  
ինչպէս վաղարշակայ ժամանակի Հայոց կացութեան , կոչելով զնա  
անմիտ և որսասէր . սակայն Պլուտարքոս կը վստահացնէ մեզ , թէ նա  
ստուգիւ ուսումնասէր ևս էր և յունարէն լեզուով ողբերգութիւնս  
ևս շարադրած : Բ. Նախնին Մովսէս այլուր համաձայն Ազաթանգե-  
ղայ , Զենոբայ և Փաւստոս , և Կորեան , պէս պէս սքանչելիս կը պատ-  
մէ մեր Արշակունի թագաւորաց աշխարհաշինութեանց , անդրեաց ,  
յաղթական արձանագրութեանց և ուրիշ շատ իրաց մասին : Գ. Եթէ  
չգտնուին ևս հայազգիւն և աշխարհի սեփական արտադրութիւնք , որ  
անկարելի է , անտարակոյս պէտք են գտնուիլ գէթ այն դրացի և  
բարգաւաճ ազգաց յիշատակարաններն , որոնց տիրապետութեան  
ներքեւ նուաճուած կը համարուին Հայք . և այս իսկ շատ է մեզ ցու-  
ցանել մեր անցեւոր ստոյգ պատմութիւնն և տարաց հետ ունեցած  
վերաբերութեամբք :

Եզրպտական դեռ նոր յայտնուած յիշատակարանք՝ կը լանան  
ցուցանել թուլմէսներու , Բամսէսներու և Սէթմսներու տիրապե-  
տութիւնը նաև Հայաստանի վրայ , տոհմային պատմութիւնը լուծ



լինելով, մենք ևս կը զարմանանք այսպիսի մի եղելութեան ստուգութեան վրայ. սակայն մի միայն արձանագրութեան, մի միայն յիշատակարանի յայտնութեամբ՝ կարելի էր վերջ տալ այսպիսի աւրակուսական խնդրոյ, ինչպէս Պերսեպոլեայ մէջ գտնուած Դարեհի Վշտասպեայ արձանագիրն, յորում՝ Արմէնիա ևս կը յիշուի այն բազմութիւնահանգաց մէջ, որոնք Մարապարսիկ տէրութեան մասը կը կազմէին, այս մասին եղած որ և է տարտկոյս փարատեց:

Իսկ Աւլարովի ձեռնարկած պեղման համար, ժամանակին ուրիշներ ևս վկայեցին, թէ շատ վեր 'ի վերոյ կերպով և առանց իսկ վերոյ յիշեալ քաղաքին բուն տեղին որոշելու եղաւ, այն պատճառաւ մեծ արդիւնք յառաջ չեկաւ անտի. իսկ գտնուած առարկաներն, թէ և ոչ այնքան կարեւոր, սակայն և այնպէս կարելի է ապացոյց համարել կարևորագոյնից պոյութեան, եթէ յիշեալ քաղաքին ճիշդ տեղին որոշուի մի և նոյն բլրան արևելեան հարաւային կողմը: Արդ, Ռուս գիտնականէն վերջ գեռ ուրիշ ստորագրութիւններ ևս 'ի լոյս տուան, յորոց մին է և իմ՝ Վիեննայի արևելագիտաց ժողովին ներկայացուցած փոքրիկ երկասիրութիւնն, որոնցմով շատ աւելի գիրադատած պէտք է համարել պեղման դործն այժմ՝ քան թէ այն ժամանակ: Արդ եթէ Հոմերոսէն բանաստեղծօրէն նկարագրուած, Քրիստոսէ տասն դար առաջ կործանուած և քսան մետր խորութեամբ դաշտագետնոյ մէջ թաղուած Տրոյիան, Քրիստոսէ ժի. դար վերջ վերստին կ'ելլէ իւր մահաթմբի դերեզմանէն և կը պատմէ մեզ իւր անցեալն, ինչ պատճառաւ նոյնը պիտի չընէ մեր պատմագրաց հօր ընդարձակ դաշտի մէջ բայց մեկնակ բլրան մի վրայ պարզ կերպով նկարագրուած Արմաւիրն, զոր Պապիմէոս ինքնին իբրև նշանաւոր քաղաք կը յիշէ: Արդ եթէ անգուլթ բաղձն ևս ուզէ թաղուած պահել զայն, մենք պէտք ենք ցանկ որոնեւ զայն և ըսել. Սրմաւիր, եկ արտաքս. եւ, կանգնէ և պատմէ մեզ քու և մեր անցեալն: Ռոբեմն այսպիսի գեղեցիկ յուսով և փափաքով վերստին կը յանձնեմ՝ այս գործս ազգասէր մամլոյն, և ցանկալի էր նոր տարւոյն հետ 'ի միասին՝ բացուած տեսնել նաև նորանոր գործունէութեանց ասպարէզ մեր անցեալը պարզելու և ներկայն զարգայնելու համար:

Հ. ԲԱՐՈՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ

